

Յուրի Ս. Ավետիսյան
Բան. գիտ. դոկտոր
Գայանե Լ. Հակոբյան

ԴԵՐԱՆՎԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Գոյական դերանուններ*

Բանալի բառեր – ներխոսքիմասային դասակարգում, անուն խոսքի մասեր, հարաբերակից խոսքի մասեր, գոյական դերանուն, անձի և իրի առում, թիվ, հոդառություն, հոգնակիակազմություն, դերանվանական հոլովում, անվանական, չհոլովվող, շարահյուսական, անմիօրինակություն:

Մուտք

Դերանուն համարվող բառերի ներխոսքիմասային դասակարգման խնդիրը մշտապես քննարկվել է հայ լեզվաբանության մեջ: Կան տարակարծություններ: Ընդունված տեսակետը դերանուն բառախմբերի (անձնական, ցուցական, փոխադարձ, ժխտական ևն), այսպես կոչված, բազմափունք դասակարգումն է, որը, սակայն, մեր խորին համոզմամբ, չունի գիտական բավարար հիմնավորում, քանի որ կատարվում է տարբեր ելակետերից, չի բացառում բառախմբերի՝ մեկը մյուսին ներառումը, չի ենթադրում դասակարգվող խմբերին հատուկ քերականական յուրահատուկ վարքագիծ և այս ամենով պայմանավորված՝ չի նպաստում նյութի համակողմանի ուսուցմանն ու յուրացմանը: Այդ մասին խոսվել է հայ լեզվաբանության մեջ¹: Մեր մոտեցմամբ՝ դերանուն համարվող բառախմբերը առանձնացնելիս պետք է հաշվի առնել երկու կարևոր, փոխապայմանավորված հանգամանք՝ 1. ի՞նչ են դրանք ցույց տալիս՝ առարկա՞, առարկայի հատկանիշ՞, թե՞ գործողության կամ հատկանիշի հատկանիշ, և ըստ այդմ՝

* Հոդվածն ընդունվել է տպագրության 02.05.2021:

1 Տե՛ս Արրահամյան Ս., Արդի հայերենի դերանունները, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1956: Հարությունյան Հ., Ածական անուն: Դերանուն, Եր., ԵՊՀ հրատ., 1976:

2. քերականական ի՞նչ կապի և առնչության մեջ են հարաբերակից անուն խոսքի մասերի հետ: Այս մոտեցմամբ կատարված դասակարգումը տալիս է մեծ հնարավորություն քերականորեն բնութագրելու դերանունների առանձնացվող խմբերն ու տեսակները, որոնք են **գոյական, ածական, մակբայ և թվական դերանունները**:

Մեր հոդվածը նվիրված է դրանցից մեկի՝ **գոյական կամ առարկայանիշ դերանունների** քերականական նկարագրության և ուսուցման խնդիրներին:

Արդի արևելահայերենի՝ առարկա ցույց տվող կամ գոյական դերանուններն են՝ **ես, դու, նա, մենք, դուք, նրանք, սա, դա, ինքը, միմյանց, իրար, մեկմեկի/ու, ինչ, ոչինչ, ամեն ինչ, ոչ ոք, ամեն ոք, յուրաքանչյուր ոք, ումևէ, ումևիցե, ամենքը, մեկը, ոչ մեկը, ովևէ, ովևիցե, ումանք** ևն²: Դերանունների այս խումբը, հարաբերակից լինելով գոյականին, դրսևորում է գոյականին բնորոշ քերականական հատկանիշներ (այստեղից էլ, իհարկե, անվանումը՝ գոյական կամ առարկայանիշ դերանուններ):

Գոյականին հատուկ է խոսքիմասային տարաբժեքությունը. իմաստային և կիրառական յուրահատկություններով պայմանավորված՝ գոյականների մի որոշակի խումբ կարող է հանդես գալ այլ խոսքի մասի նշանակությամբ, և, հակառակը, այլ խոսքի մասեր, գոյականաբար գործածվելով և կամ այլ գործոններով պայմանավորված, կարող են վերածվել նաև գոյականների, ինչպես՝ **վեհափառ – ած./գ., բանակային – ած./գ., լսում – բայ/գ., ես – դերն./գ., տակ – գ./մկբ./կապ, ներքև – գ./մկբ./կապ, հետ – գ./կապ/մկբ.** ևն: Նույն հատկանիշը հատուկ է մեր դասակարգմամբ առանձնացվող դերանվանական խմբերին: Այսպես: **Այս, այդ, այն** ածական դերանունները հազվադեպ կարող են գործածվել նաև գոյական դերանունների նշանակությամբ, ինչպես՝ «**Այդ քեզ վերցրու, մյուսը վերադարձրու**»; «Սեղանին դրված էր նամակը. ներս մտավ, վերցրեց **այն** և արագ տեղավորեց ձեռքի պայուսակում»): **Որ** և **ինչ** դերանունները ցույց են տալիս և՛ ա-

2 Հ. Հարությունյանը դերանուններ է համարում նաև *մերոնք, մերոնք* բառերը: Տե՛ս Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 73-74: **Ա. Մարգարյանը** դրանք դիտարկում է որպես «փոխանուն ստացական դերանուններ», ինչպես *իմ/իմոնք, քոն/քոնոնք* դերանունները: Տե՛ս **Մարգարյան Ա.**, Հայոց լեզվի քերականություն՝ ձևաբանություն, ԵրԹ, Երևանի համալսարանի հրատ., 2004, էջ 308-310: **Է. Սղայանը** համարում է հավաքական գոյականներ. «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում տրվում են հետևյալ բացատրությունները. «**Մերոնք, ըոնք, գ. հվք.** 1. Մեր մոտիկները հարազատները կողմնակիցները, մերայիններ» ևն: «**Չերոնք, հվք. գ.** 1. Խոսակցի հետ որևէ կարգի (արյունակցական, խաղի ևն) խմբակցություն կազմող մարդիկ» ևն: **Սղայան Է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1976, էջ 1002, 922: Թերևս առավել համոզիչ է դրանք որպես գոյական դերանուն դիտարկելը, եթե հաշվի առնենք, որ դրանք կազմված են դերանվանական հիմքով և ունեն դերանուն խոսքի մասին հատուկ հատկանիշներ՝ ցուցականությունը (ցույց են տալիս խոսող, խոսակից ևն՝ իր համախոհներով, և ոչ թե անվանում են մեկից ավելի միևնույն տեսակի առարկաներ), ընդհանրական չտարբերակված իմաստ արտահայտելը՝ ի տարբերություն գոյականների արտահայտած կոնկրետ իմաստի, որոշակի հարաբերությամբ (դիմային, տարածական ևն) առարկա ցույց տալը, որը հատուկ չէ գոյականների ուղիղ ձևերին ևն:

ռարկա («Գիրքը, որ դրված է սեղանին»; «Ինչ պիտի ասես նրան»), և՛ առարկայի հատկանիշ («Չգիտեմ՝ որ գիրքն ես նախընտրում»; «Ի՛նչ խոսքերով երգեմ քեզ»): **Ի՛նչ**-ը կարող է ցույց տալ նաև գործողության հատկանիշ («Ի՛նչ ես անընդհատ այդ մասին խոսում» (պատճ. պարագա)) կամ հատկանիշի հատկանիշ («Ի՛նչ գրավիչ տեսարան է» (չափի պարագա)): **-քան** և **-չափ** վերջնաբաղադրիչով դերանունները և՛ թվականանիշ են, և՛ մակբայանիշ՝ ըստ գործածության, ինչպես՝ **Այդչափ հոգնություն / Այդչափ հոգնած; Այդքան ներում / Այդքան ներել**:

Գոյական դերանունները, ինչպես գոյականները, հոլովվում են, ունեն առում, առկայացման և թվի քերականական կարգեր, առանձին դեպքերում՝ մասնակի դրսևորումներով:

Անձի և իրի առում: Այս տեսակետից դերանունները կարելի է դասակարգել երեք խմբի. 1. դերանուններ, որոնք ցույց են տալիս միայն անձ՝ **ես, դու, ով, յուրաքանչյուր որ, ոչ որ, ամեն որ, ոմանք, ամենքը, ովևէ, ումևէ** ևն. 2. դերանուններ, որոնք միայն իրանիշ են՝ **սա, դա³, այս, այդ, այն, ինչ, ոչինչ, ամեն ինչ**. 3. դերանուններ, որոնք ցույց են տալիս և՛ իր, և՛ անձ՝ **մեկը, ամեն մեկը, ոչ մեկը, նա, իրար, միմյանց, մեկմեկու** ևն: Առաջին երկու խմբերին՝ իրանիշ և անձնանիշ դերանուններ, բնորոշ առման հատկանիշը հատուկ է նաև գոյականներին՝ իրանիշ և անձնանիշ գոյականներ: Բայց գոյականները չունեն միաժամանակ և՛ անձ, և՛ իր անվանող տեսակներ. դա գոյական դերանուններին բնորոշ հատկանիշ է:

Նա ցուցական դերանունը համանուն է **նա** անձնական դերանվանը և, ի տարբերություն վերջինի, կարող է մատնացույց անել ոչ միայն անձ (ինչպես՝ «**Նա** լավ բժիշկ է»), այլև ոչ անձ («Սրանք իմ գրքերն են, դրանք՝ Գայանեի, իսկ **նրանք**՝ Վարդանի»): Հանձնարարելի չէ **դա** դերանվան փոխարեն **նա**-ի գործածությունը, եթե խոսքը ոչ անձի մասին է, ինչպես՝ «Հումանիշները և **նրանց** (>դրանց) ոճական կիրառությունը»:

Երկրորդ դեմքի **դու/դուք** դերանվան գործածությունը գեղարվեստական խոսքում կամ այլուր՝ իրանիշ առարկաներ մատնանշելու համար, **անձնավորում** կոչվող ոճական հնարանք է, ինչպես՝ «Օ՛, գարնան ամիս, ապրելու՛ ապրիլ, / **Դու**, որ բերում ես ծաղիկներ ու կյանք, / Ինչո՞ւ **դու** դարձար մահվան տարելից, / Մահով մնացիր մեր պատմությունում» (ՄԿ): Այստեղ, բնականաբար, **դու**-ն չպետք է ընկալել իբրև թե իրանիշ դերանվան սովորական գործածություն:

3 **Սա** և **դա** դերանունները հազվադեպ կարող են մատնացույց անել անձ, ինչպես՝ «**Սա** ավագ եղբայրն է, **դա** միջնեկը, **նա** կրտսերը»: Ավելի հաճախ, անձի նշանակությամբ գործածվելիս այդ դերանունները արտահայտում են մի տեսակ արհամարհական, հեգնական վերաբերմունք՝ «**Սա** է քո ընկերը»; «Գործ չունես **սրանց** հետ. **սրանք** քեզ ձանձիփց կշեղեն»; «Այդ երիտասարդների մասի՞ն է խոսքը. **դրանք**, չգիտեմ, որտեղի՞ց հայտնվեցին»:

Դերանունների դեմքը: Դիմային հարաբերության իմաստ կարող են ձեռք բերել միայն անձնանիշ գոյականները: Տրամաբանական է, որ քերականական այդ իմաստը բնորոշ լինի գոյական դերանունների այն տեսակին, որոնք ցույց են տալիս անձ: Գոյականները դիմային իմաստը ձեռք են բերում միայն դիմորոշ հոդերի միջոցով՝ **քաղաքացիս - ես՝ քաղաքացիս, քաղաքացիդ - դու՝ քաղաքացիդ, քաղաքացին - նա՝ քաղաքացին:** Մինչդեռ որոշ դերանուններ դեմքի կարգն ունեն ինքնին: Եվ դա արտահայտում են ոչ թե նույն բառի տարբեր քերականական ձևերով, ինչպես գոյականների պարագայում է, այլ տարարմատությամբ՝ **ես-դու-նա, մենք-դուք-նրանք:** Անձնանիշ **ինքը** դերանունը դիմային լրացուցիչ նշանակություն կարող է ստանալ գոյականների նման՝ հոդ ստանալով՝ եզակի և հոգնակի ձևերում՝ **ինքս, ինքդ, ինքը/-ն, ինքներս, ինքներդ.** այս հարաբերության մեջ **ը/ն**-ն ունի դիմորոշ հոդի քերականական նշանակություն: **Ինքը** դերանվան՝ դիմորոշ հոդով ձևերը ունեն սաստկական նշանակություն. հաճախ գործածվում են համապատասխան դերանունների հետ՝ **ես ինքս, դու ինքդ, նա ինքը.** գրվում են առանց կետադրության:

Մի քանի դերանունը փոխանվանաբար գործածվելիս ստանում է **ս** մասնիկը (մի քանիսը, մի քանիսի, մի քանիսները ևն), որը չունի առման կամ առկայացման իմաստ:

Դերանունների թվը: Թվի կարգը հատուկ է գոյական դերանունների մի մասին: Ըստ թվակազմության՝ դերանունները կարելի է բաժանել երկու խմբի: Այնպես, ինչպես գոյականները. հիշենք՝ կան գոյականներ, որոնք ունեն եզակի և հոգնակի թվի հակադրություն և հոգնակի թվի կազմության իրենց կանոնները, և գոյականներ, որոնք այդ հակադրությունը չունեն. անեզական են կամ անհոգնական: Նույն հատկանիշները հատուկ են նաև գոյական դերանունների թվակազմությանը՝ իմաստային և կառուցվածքային մասնակի տարբերություններով հանդերձ: Այսպես:

1) **Եզակի և հոգնակի թվի հակադրություն ունեցող դերանուններ.** **ես, դու, նա, սա, դա, ինքը, ով, ինչ, ոմն** (ածական դերանուն), **ոմանք** (գոյական դերանուն): **Ես, նա, սա, դա** դերանունները հոգնակի թիվ են կազմում տարարմատությամբ. ի տարբերություն գոյականների՝ գոյական դերանունների պարագայում ակտիվանում է **ք** հոգնակերտը՝ **ես-մենք, նա-նրանք, սա-սրանք, դա-դրանք:** **Դու** դերանունը հոգնակի է կազմում **ք**-ի հավելումով՝ **դու+ք, ով-ը՝ -ք** և **-եր** հոգնակերտներով՝ **ով+ք+եր:** **Ինչ-ը** հոգնակի է կազմում գոյականների նման՝ **ինչ-եր:** **Ինքը** դերանունը հոգնակին կազմում է տրականի հիմքից՝ **իրենք:** Որպես **ինքը** դերանվան հոգնակիի տարբերակ նշվող **ինքները** զուգաձևը⁴, մեր կարծիքով, գրական

4 Տե՛ս Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., ԵՊՀ հրատ., 1983, էջ 181-182:

լեզվում այլևս անգործածական է, և գրավոր աղբյուրներում դրա գործածությունը խիստ սակավ է:

Քուն գոյականների թվի քերականական կարգի համեմատ՝ գոյական դերանունների թվի քերականական կարգը ունի նաև իմաստային մասնակի տարբերություն. դիմային հարաբերությամբ անձնանիշ դերանունները եզակի թվով ցույց են տալիս մեկ անձ՝ խոսող, խոսակից կամ երրորդ անձ, իսկ հոգնակի թվով՝ ոչ թե միևնույն տեսակի մեկից ավելի անձեր, այլ անձերի հավաքական նշանակություն՝ **մենք, դուք, նրանք, իրենք, ովքեր**:

2) **Դերանուններ, որոնք չունեն եզակի և հոգնակի թվի հակադրություն**: Մրանք բաժանվում են 2 խմբի՝ ա) **անհոգնական դերանուններ**, որոնք գործածվում են միայն եզակի թվով (մեկը, ոչ մեկը, ամեն մեկը, ոչ ոք, ամեն ոք, յուրաքանչյուր ոք, ոչինչ, ամեն ինչ), և բ) **անեզակական դերանուններ**, որոնք հոգնակիի իմաստ են արտահայտում (միմյանց, իրար, մեկմեկու//մեկմեկի, ամեն(ք)ը, բոլորը ևն)⁵:

Ածականին հարաբերակից իմաստ արտահայտող **ոմն** դերանվան հոգնակին՝ **ոմանք**, ունի առարկայական իմաստ. ցույց է տալիս անորոշ առարկաների հոգնակիություն. անձնանիշ դերանուն է: **Ամենքը** դերանվան **ք**-ն ոչ թե հոգնակիության, այլ առման ցուցիչ է. ամենը սովորաբար գործածվում է իր, իսկ ամենքը՝ անձ ցույց տալու համար:

Դերանունների հոդառությունը: Հոդառությունը բնորոշ է առարկա անվանող բառերին՝ գոյականներին: **Ս, դ, ն (ը)** հոդերը ստանալով՝ այդ բառերը կարող են ցույց տալ որոշյալություն, ստացականություն, դիմորոշություն, ցուցականություն: Գոյական դերանուններին նույնպես բնորոշ է հոդառությունը: Դերանունները, իբրև իրադրական բառեր, իմաստային և ծագումնաբանական սերտ կապի մեջ են հոդերի հետ. հոդերը, ինչպես հայտնի է, առաջացել են համապատասխան դերանունների արմատական մասերից (**ս**-ես, սա, այս, **դ**-դու, դա, այդ, **ն**-նա, այն) և գործածության մեջ հաճախ փոխարինում են միմյանց:

Ամեն ոք և **յուրաքանչյուր ոք** դերանունները հոդ չեն ստանում: **Ինչ, ամեն ինչ** գոյական դերանունները ստանում են որոշիչ և ստացական հոդեր (**ինչը, ամեն ինչը; ինչս(դ), ամեն ինչս(դ)**): Հոգնակի **մեր, ձեր, իրենց** կամ **նրանց** ձևերի փոխարեն՝ գործածված ստացական հոդից առաջ **-եր** հոգնակերտ մասնիկը կարող է փոխարինվել **-ներ** մասնիկով՝ *Ձեռքներդ հեռո՛ւ: = Ձեր ձեռքերը հեռո՛ւ; Աչքներս լույս: = Մեր աչքերը լույս: Հագ-*

5 Անձնական դերանվան 2-րդ դեմքի հոգնակիի ձևերը կարելի է գործածել նաև եզակիի նշանակությամբ: Այդպիսի գործածությունը կոչվում է **քաղաքավարական հոգնակի**: Դրանք գրվում են մեծատառ **Դուք Ինքներդ, Ձեր, Չեզանից** ևն: **Մենք**-ը եզակի նշանակությամբ կարելի է գործածել գիտական գրականության մեջ, մասամբ պաշտոնական գրագրություններում *Մենք այն կարծիքին ենք, որ ...; Հայտնում ենք Ձեզ, որ մենք...:* Այս գործածությունը, սակայն, բնավ էլ պարտադիր պայման չէ:

ներին շոր չունեին: = *Իրենց հագին շոր չունեին; Մոտներս փող չկար:* = *Մեր մոտ փող չկար:*

Հոգնակիի այսպիսի արտահայտությունը, որը արևելահայերենում բնորոշ է գերազանցապես միավանկ գոյականներին, կոչվում է ստացական հոգնակի՝ նշանակելով, որ տվյալ առարկան կամ տվյալ տեղը վերաբերում է յուրաքանչյուրին: Բնորոշ է խոսակցական լեզվին⁶:

Ցուցական հոդը, ինչպես գիտենք, ժամանակակից հայերենում ունի սահմանափակ գործածություն. ի տարբերություն գոյականների՝ գոյական դերանունները ցուցական հոդ չեն ստանում:

Դերանվանական համակարգում ավելի լայն գործածություն ունեն դիմորոշ հոդերը: Հայտնի է, որ սրանք դրվում են անձնանիշ գոյականների վրա՝ ցույց տալով դիմային հարաբերություն: Բնականաբար, նույն օրինաչափությունը գործում է նաև այստեղ: Ինչպես վերը նշեցինք, որոշ դերանուններ առանց հոդերի ունեն դիմային իմաստ (ես, դու, նա), մյուսներն առարկան ցույց են տալիս դիմային որևէ հարաբերությամբ (սա, դա), հետևաբար և դիմորոշ հոդը սրանց համար դառնում է ավելորդ: Հոդառությունը բնորոշ է **ինքը** դերանվանը, որը գործածվում է նաև համապատասխան դեմքի դերանվան հետ՝ ավելի շեշտելով դիմայնությունը՝ **ես ինքս, դու ինքդ** ևն: Դիմորոշ հոդ ստանում են նաև **ամենքը, ամեն մեկը, ոչ մեկը, մեկը** դերանունները, երբ ցույց են տալիս անձ, օր.՝ «**Ամեն մեկս** իր անելիքն ունի»; «**Ամենքս** միասին մեծ ուժ ենք»; «**Մեկը** ձայն չհասեց»: Դիմորոշ հոդ կարող են ստանալ նաև այն դերանունները, որոնք փոխանվանական կիրառությամբ մատնանշում են անձ, ինչպես՝ **բոլոր-ս/-դ, այսքան-ս/-դ, այսինչ-ս/-դ, այնինչ-ս/-դ, յուրաքանչյուր-ս/-դ** ևն:

Դերանվան հոլովումը: Հոլովման համակարգում գոյական դերանունները, բնականաբար, հարաբերակից խոսքի մասից՝ գոյականից, ունեն որոշակի տարբերություններ: Չհոլովվող գոյականներ չկան, սակայն կան գոյական դերանուններ, որոնք առհասարակ չեն հոլովվում, ինչպես՝ **ամեն ոք, յուրաքանչյուր ոք:** Հոլովվող դերանունների մի մասը հոլովվում է գոյականից տարբեր հոլովմամբ, որը կոչվում է **դերանվանական հոլովում:** Ասել է թե՛ հոլովվող դերանունները բաժանվում են երկու խմբի՝ դերանուններ, որոնք հոլովվում են գոյականների նման՝ անվանական հոլովմամբ, և դերանուններ, որոնք հոլովվում են գոյականներից տարբեր՝ դերանվանական հոլովմամբ:

Դերանվանական հոլովում: Դերանվանական հոլովման ենթարկվում են **Ց+1** դերանուններ՝ **ես, դու, նա, սա, դա, մենք, դուք, ինքը, ով:**

6 Անձնական դերանվան սեռական հոլովի և ստացական հոդի համատեղ (միաժամանակյա) գործածությունը արևելահայերենում, ինչպես հայտնի է, անթույլատրելի է: Դա բնորոշ է արևմտահայ գրական լեզվին՝ **իմ գիրքս, քու մանչը:** Դիմորոշ հոդի և անձնական դերանվան համատեղ (միաժամանակյա) գործածությունը թույլատրելի է՝ **մենք ուսանողներս, դուք մասնակիցները:**

Դերանվանական հոլովման հատկանիշներն են՝

1. Սեռականում և տրականում չունեն քերականական ցուցիչ կամ չեն կազմվում ներքին թեքումով և հերթագայությամբ՝ ի տարբերություն գոյականների: Ունեն տարարմատություն. **ես, դու, մենք, դուք, ինքը** դերանունների տարարմատությունն արտահայտվում է սեռականում և տրականում (**ես-իմ-ինձ, դու-քո-քեզ, մենք-մեր-մեզ, դուք-ձեր-ձեզ, ինքը-իր-իրեն**), **սա, դա, նա, ով** դերանուններինը՝ սեռականում (**սա-սրա, դա-դրա, նա-նրա, ով-ույմ**). Վերջինի սեռականը և տրականը ձևով համընկնում են՝ **ույմ-ույմ** (այդ իսկ պատճառով դերանվանական հոլովման ենթարկվող դերանունների քանակը ներկայացնում ենք վերը նշված բանաձևով՝ 8+1), իսկ **սա, դա, նա** դերանուններինը կազմվում է **ն-ի** հավելումով (սրա-ն, դրա-ն, նրա-ն) :

2. Այդ դերանուններից մի քանիսը բացառական, գործիական և ներգոյական հոլովներում ունեն զուգաձևեր, որոնք երկուսն էլ կազմվում են տրականի հիմքից (անվանական հոլովման դեպքում սովորական են նաև ուղղական հիմքով կազմությունները): Այդ հիմքերը լինում են **երկձևույթ**. սեռական-տրականի և այդ ձևերի միջև ընկած է **ան** մասնիկը կամ դրա կրճատ ձևը՝ **ն**. ենթադրվում է, որ ծագել է **սա, դա, նա** դերանունների համապատասխան հոլովաձևերի՝ **սր-ան, դր-ան, նր-ան**, համաբանությամբ (ես-ինձնից/ինձանից, ինձնով-ինձանով, ինձնում/ինձանում; դու-քեզնից/քեզանից, քեզնով/քեզանով, քեզնում/քեզանում; մենք-մեզնից/մեզանից, մեզնով-մեզանով, մեզնում/մեզանում ևն):

Նշված տարահիմք զուգաձևերից (ինձնից-ինձանից, մեզնից-մեզանից ևն) գրական լեզվին առավել հասուկ են երկրորդները⁷: Ըստ որում, ներգոյականի ձևերը (մեզնում//մեզանում, ձեզնում//ձեզանում ևն) գրական լեզվի նորմերի սահմաններում են⁸, բայց գործածվում են հազվադեպ: Գործածական որոշ հաճախականություն ունի **մեզանում** ձևը, որը փոխանվանաբար կրել է իմաստային որոշակի փոփոխություն. նշանակում է **խոսողի միջավայրում**: Մյուսները աստիճանաբար դուրս են մղվում գրական լեզվից՝ փոխարինվելով կապային կապակցություններով՝ **իմ մեջ, քո մեջ, մեր մեջ** ևն⁹:

Անվանական հոլովում: Այս հոլովման ենթարկվում են՝

7 Նշված երկձևույթ կազմությունները այլ աղբյուրներ համարում են ժողովրդախոսակցական: Տես **Ասատրյան Մ.**, նշվ. աշխ., էջ 183: **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 291:

8 Բուհական որոշ ձեռնարկներում ներգոյականի ձևերը այս դերանունների հոլովական հարացույցներում չեն նշվում, այսինքն՝ գործածական չեն համարվում: Տես **Խլղաթյան Ֆ.**, ժամանակակից հայոց լեզու, մաս Բ, Եր., «Ձանգակ» հրատ., 2010, էջ 120-121:

9 **Ս. Արրահամյանը** դերանվանական հոլովման ենթարկվող դերանունների շարքում նշում է նաև **իրար** դերանունը՝ նկատի ունենալով սեռ-տրկ-ում դրա արմատական կազմությունը (տես «ժամանակակից հայոց լեզու», Եր., հատ. 2, ՀՍՄՀ ՉԱ հրատ., 1974, էջ 224):

• **Մեկը, ինչ** և դրանցով բաղադրված դերանունները՝ **ի** հոլովում՝ **մեկը-մեկ-ի/-ից/-ով/-ում > ամեն մեկը-ի, ոչ մեկը-ի, մեկնումեկը-ի, ոչինչ-ոչնչ-ի/-ից/-ով/-ում > ամեն ինչ-ի** են:

• **Ի** հոլովման են ենթարկվում նաև **-տեղ-ով** բաղադրված մակբայ դերանունները, քանի որ ցույց են տալիս տեղի առարկայական նշանակություն՝ **այստեղ-ի, այնտեղ-ի** են:

• **Ց** հոլովման են ենթարկվում **սրանք, դրանք, նրանք, իրենք, ոմանք** դերանունները. սեռական-տրականը կազմում են **ք/ց** հերթագայությամբ, իսկ մյուս թեք հոլովները՝ սեռական-տրականի ձևից՝ անվանական հոլովման **-ից, -ով, -ում** վերջավորություններով՝ **սրանց/սրանց-ից/-ով/-ում** են: **Ոմանք-ի** գործիականը՝ **ոմանցով**, ունի հազվադեպ գործածություն: Ներգոյականը չի գործածվում:

• **Ց** հոլովման են ենթարկվում նաև **մերոնք, ձերոնք** բառերը: Չունեն ներգոյական հոլով, քանի որ ցույց են տալիս անձ: **Իմոնք, քոնոնք** փոխանուն ստացական դերանուններն էլ ենթարկվում են **ց** հոլովման:

• Անվանական **ի** հոլովման ենթարկվում են նաև **իմ, քո, մեր, ձեր** և սեռական այլ հոլովաձևեր, երբ գործածվում են փոխանվանաբար (փոխանուն սեռական)՝ **իմ-ի/-ից/-ով, քոն-ի/-ից/-ով**: Եզակի և հոգնակի թվում հոլովվում են նաև դրանց կրկնակի ստացականները՝ **իմինք-իմին-ի/-ից/-ով, իմինները-իմիններ-ի/-ից/-ով** են: Այս ձևերը գործածվում են խոսակցական լեզվում:

• **Երբ** մակբայ դերանունը ունի ժամանակային իմաստ և ժամանակ ցույց տվող գոյականների նման ենթարկվում է **-վա** հոլովման՝ **երբվա, երբվանից**. չունի գործիականի և ներգոյականի ձևեր:

• **Միմյանց, իրար, մեկմեկու** դերանունները հատկանշվում են նրանով, որ՝ ա) զուրկ են ուղղական, ներգոյական հոլովաձևերից, բ) սեռական, տրական և հայցական հոլովներում ունեն համանունային քերականական ձևեր, գ) բացառականը և գործիականը կազմում են՝ **միմյանց-ի** և **իրար-ի** դեպքում՝ **-ից, -ով**, իսկ **մեկմեկու-ի** դեպքում՝ **-ուց, -ով** վերջավորություններով:

• **ոք-ով** բաղադրված դերանուններից (յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ոչ ոք) հոլովվում է միայն **ոչ ոք-ը՝ ոչ ոք-ի, ոչ ոք-ից, ոչ ոք-ով**:

• Չեն հոլովվում նաև **ինքս, ինքդ, ինքներս, ինքներդ, ովևէ, ովևիցե** գոյական դերանունները:

Դերանունների իմաստային և ձևաբանական անմիօրինակությամբ է պայմանավորված նաև այդ խոսքի մասի շարահյուսական անմիօրինակությունը: Հասկանալի է, որ գոյական դերանուններն ունեն հիմնականում

գոյականներին հատուկ շարահյուսական կիրառություններ: Առանձին դեպքերում դրսևորում են յուրահատկություններ: Կան դերանուններ, օրինակ, որոնք, ի տարբերություն գոյականների, որոշակի պաշտոններ չեն կարող կատարել. դերանունները սովորաբար չեն կարող հանդես գալ կոչականի պաշտոնում, չունեն որոշչային գործածություն և հանդես չեն գալիս որոշյալի դերում, իսկ որոշ պաշտոններում էլ հանդես են գալիս միայն կապային կապակցություններով ևն (այս մասին հանգամանորեն կխոսվի ստորև):

Գոյական դերանունները նախադասության մեջ կարող են լինել՝

• **Ենթակա:** Անձնանիշ **ես (մենք), դու (դուք), նա (նրանք)** դերանունները երբեմն ենթակա են դառնում՝ **ինքը (ինքներս/ինքներդ/իրենք)** դերանվան հետ կապակցվելով, և վերջինս ստանում է համապատասխան դիմորոշ հոդ՝ նախորդող դերանվանը հաղորդելով սաստկացնող իմաստ, օր.՝ «Պատասխանատվություն պիտի կրես նաև **դու ինքդ**, քանի որ մեղսակից ես հանցանքին»; «**Մենք ինքներս** այդ մասին հետո ենք իմացել»: Նույնպիսի իմաստ են հաղորդում քննարկվող դերանուններին նաև **ամենքը** և **բոլոր(ը)** դերանունները համանման կիրառություններում՝ **մենք բոլորս, դուք բոլորդ, դուք ամենքդ** ևն, ինչպես՝ «**Մենք ամենքս** հյուր ենք կյանքում» (ՀԹ); «**Մենք բոլորս, բոլորս** մանուկներ ենք որք» (ԵԶ); «**Դուք բոլորդ** մի օր կանգնելու եք Աստծո դատաստանի առաջ»: **ես ինքս, դու ինքդ** և նման կապակցությունները **Մ. Աբեղյանը** համարում է բացահայտիչ-բացահայտյալ¹⁰: Այլ կարծիքի է **Ս. Աբրահամյանը**. ըստ նրա՝ դրանք ոչ թե ձշտում կամ մանրամասնում են, այլ պարզապես սաստկացնում են իրենց նախորդող գոյականի կամ դերանվան իմաստը¹¹: Դրանք, մեր կարծիքով, կառուցվածքային առումով լինելով բացահայտիչ և բացահայտյալ, ըստ էության ունեն ոճական հավելադրության արժեք: Քննարկվող դերանունները թերևս շարահյուսական նույնպիսի հարաբերություն են արտահայտում նաև հակառակ դասավորությամբ՝ **ինքս ես, ինքներս մենք** ևն. հազվադեպ գործածություններ են, որոնց բաղադրիչ դերանունները երբեմն տրոհվում են ստորակետով, ինչպես՝ «Գուցե հանկարծ կասկածեն, չհավատամ **ինքս, ես**, / Ու սուտ թվա իմ հոգուն / Քո կարոտը սրբազան» (ԵԶ):

Ինքը դերանունը (նաև **ս, դ** հոդերով) ինքնուրույն նույնպես կարող է դառնալ ենթակա, օր.՝ «**Ինքս** չէի կարող այդպես վարվել»; «**Ինքդ** կնախաձեռնես այդ շարժումը»; «Առաքինի մարդը սպանություն

10 Տե՛ս **Աբրահամյան Ս.**, Արդի հայերենի դերանունները, Եր., 1956, էջ 216:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 216-217:

չի գործում ոչ թե նրա համար, որ գոյություն ունի «մի՛ սպանիր» բարոյական նորմը, այլ նրա համար, որ **ինքն** ընդունակ չէ սպանելու»:

- **Հասկացուցիչ:** «Հոգ չէ, որ **մեր** օրերն անցան տենդի պես» (Ե2); «**Իմ** անձնական փորձառությունից ելնելով՝ կարող եմ ասել, որ նա, ով չունի արատներ, զուրկ է նաև առաքինություններից»:

- **Ուղիղ խնդիր:** «Ինչպե՛ս, ինչպե՛ս ընդունեմ կյանքիս բաժակը քամած, / Որ ձեռքերս չդողան, որ օրերս ներե՛ն **ինձ**» (Ե2):

- **Անուղղակի խնդիրներ:** «Նա օժտված է բոլոր առաքինություններով, որ ես ատում եմ, սակայն զուրկ է այն արատներից, որոնցով ես հիանում եմ»; «Սկզբում հանրությանը վարժեցնում են լսելուն, հետո հետևում են **նրան**, թե ինչ է ուզում նա լսել»: Շատ հաճախ հանդիպում են կապային կառույցներով՝ «Ծանոթ շները չեն հաչում վրադ, / Ծանոթ մարդիկ են հաչում **քո վրա**» (ԱԻ); «Որևէ **մեկի հետ** զրուցելիս խոսակցությունը մի՛ սկսեք այն հարցերի քննարկումով, որոնցում ձեր կարծիքները չեն համընկնում»:

- **Ստորոգելիական վերադիր:** «Ես **նա** եմ նաև, / Որ տարբերում է պաշը համբույրից, / Ինչպես սիրողին՝ սիրահարվածից» (ՊՍ); «**Ես եմ** հիմա – մի պոետ. և իմ անունը – Չարենց» (Ե2):

- **Տեղի պարագա:** Այս պաշտոնով հանդես է գալիս քննարկվող դերանունների հատկապես ներգոյական հոլովածևը, օր.՝ «**Մեզանում** ընդունված չէ ավանդախախտությունը»; «**Դրանում** ես համոզված եմ»; «Ներկայացված գործերից և **ոչ մեկում** առկա չէ հանցակազմ»: Սակայն դրանց մի մասը նշված պաշտոնում հանդես է գալիս **սեռական+մեջ** կապակցությամբ, քանի որ դրանց ներգոյականը գործածական չէ, օր.՝ «**Ամեն ինչի մեջ** գտի՛ր լուսավորը»; «Երազելու բնական մղում կա **յուրաքանչյուրիս մեջ**»; «Որտեղ կա միտք, գաղափար, պայքար, շախմատը **դրա մեջ** չի կարող չլինել»:

- **Միասնության պարագա:** Այս պաշտոնում դերանունները սովորաբար հանդես են գալիս կապային կառույցներով՝ «**Ամենքի հետ** սեղան նստա, / Սուլթան, վեզիր, խան չմնաց» (Ե2): Միայն **ամեն ինչ** դերանունն է, որը այդ պաշտոնում կարող է հանդես գալ հոլովածևով՝ գործիականով: Օր.՝ «**Ամեն ինչով** պարտական է քեզ»:

- **Նպատակի պարագա:** Դերանունը նպատակի պարագայի պաշտոն կատարում է սովորաբար **համար, հանուն** կապերի հետ միասին (տրական հոլովը, առանձին վերցրած, նպատակի պարագայի պաշտոն սովորաբար չի կատարում): Այդ կապերի խնդիրը դրվում է կա՛մ սեռական, կա՛մ էլ տրական հոլովով: Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններով արտահայտված կապի խնդիրը դրվում է

տրական հոլովով (*ինձ* համար, *ձեզ* համար, *մեզ* համար, հանուն *ձեզ* նն), իսկ մյուս դերանունները՝ որպես այդ կապերի խնդիր, դրվում են սեռականով: Օր.՝ «Անկասկած, ամեն ինչ արվել է **ձեզ համար**»; «Դու պարտավոր չես գնալ այդ քայլին **ինչ-որ մեկի համար**»; «**Ինչի՞ համար** ես մեկնում քաղաք»):

- **Համար** կապով կառույցները կարող են գործածվել նաև որպես **պատճառի պարագա** («**Ինչի՞ համար** քեզ վտարեցին կուսակցությունից»; «**Մեզ համար** քեզ հանդիմանեց»; «Վատ էր պահում իրեն, **դրա համար** էլ պատժվեց»), **վերաբերության խնդիր** («**Ինձ համար** կյանքը սկիզբ էր առնում / Իմ ծնված օրի՛ց, իմ ծնված օրո՛վ» (ՄԿ) նն):

- **Ինչ դերանունը**, գոյական դերանուններին հատուկ գործածություններից բացի, իր իմաստային յուրահատկություններով պայմանավորված, ունի նաև այլ կիրառություններ. հաճախ ածական դերանունների նման կարող է նախադասության մեջ դառնալ՝ ա) որոշիչ՝ *ինչպիսի՞*, *ո՞ր* իմաստով («Էլ *ի՞նչ* արահետ, որ տաճար չի տանում»; «Սա *ի՞նչ* վերաբերմունք է»; «*Ի՞նչ* հարցեր պիտի քննարկվեն»); այս դեպքում լրացյալը սովորաբար լինում է անորոշ առումով, իսկ երբեմն լինում է նաև որոշյալ («Իմ *ի՞նչ* գործն է»), բ) **չափ ու քանակի պարագա՝ ինչքա՞ն, որքա՞ն** իմաստով («Եվ *ի՞նչ* արժե այդ գիրքը»; «*Ի՞նչ* չքնաղ այգի է»), գ) **պատճառի պարագա՝ ինչո՞ւ, ինչի՞ համար** նշանակությամբ («**Ի՞նչ** ես ձեռքդ մեկնում սրին, / Ա՛յ խենթ մանուկ Սասնա տան....» (ՄԿ)): Ունի նաև **շաղկապական կիրառություն**. կատարում է ստորադասական շաղկապի դեր. իրար է կապում գլխավոր և երկրորդական նախադասություններ՝ «**Ինչ** ունեցել է ժողովուրդը քո...., / **Ինչ** ունի այսօր, **ինչ** երազ ու խոհ, / Ողջը հավաքել ու տվել է քեզ» (ԵԶ):

Ծանոթություն: **Ինչ դերանունը** **չպետք է շփոթել ժամանակի կամ այլ իմաստ ունեցող ստորադասական ինչ համանուն շաղկապի** («**Ինչ քաղաքից** վերադարձել է, չեմ տեսել նրան»; «**Ինչ հնար էլ լինի, պիտի փորձել**»), **տրոհական ինչ...., ինչ շաղկապի՝ թե՛...., թե՛.... նշանակությամբ** («**Ինչ դու, ինչ քո ընկերները**»), **ինչ վերաբերականի** («Եվ *ի՞նչ, դու կարծում ես, որ նա՞ է այդ ամենի մեղավորը*») **հետ:**

- **Ամեն մեկը, ամեն ոք, յուրաքանչյուրը, ոչ ոք, մեկը, ոչ մեկը, ոմանք** դերանուններին բնորոշ է խնդրառությունը. պահանջում են բացառական հոլովով անջատման խնդիր, որը այն ամբողջությունն է, որի մասը նշվում է դերանվամբ՝ *մեզանից ոմանք, ձեզնից յուրաքանչյուրը, հավաքվածներից մեկը, ներկաներից ոչ մեկը:*

- Իրենց չտարբերակված, իրադրական իմաստով պայմանավորված՝ գոյական դերանունները չեն կարող դառնալ կոչական: Որ-

յուն: Շաղկապական նշված դերանուններին գլխավոր նախադասության մեջ սովորաբար համապատասխանում են իմաստային ընդհանրություն ունեցող այլ դերանուններ. դրանք կոչվում են հարաբերյալներ, օր.՝ «**Նա, ով** փնտրում է անթերի ընկեր, մենակ կմնա»; «**Ում** փնտրում էի, գտա»:

Ամփոփում: Գոյական դերանունների այս մոտեցմամբ քննարկումը ցույց է տալիս, որ դրանք գոյական խոսքի մասի համեմատությամբ ունեն իմաստային, ձևաբանական և շարահյուսական և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Այս համադրություն-համեմատության մեջ առավել չափով է ընդգծվում-տեսանելի դառնում և հետևաբար նաև լավ է յուրացվում գոյական դերանունների քերականական նկարագիրը:

Յուրի Ս. Ավետիսյան – հեղինակ է մեկ տասնյակից ավելի մենագրական աշխատանքների, ձեռնարկների ու դասագրքերի, մոտ յոթ տասնյակ գիտական հոդվածների: Համահեղինակ է երկու տասնյակից ավելի գրքերի: Գիտական նախասիրություններն են՝ արևմտահայերեն, խոսքի մշակույթ և ոճագիտություն, ժամանակակից հայոց լեզվի քերականություն և այլն:

Էլ. հասցե - yuriavetisyan@ysu.am

Գայանե Լ. Հակոբյան–գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է թարգմանչական գործը, ժամանակակից հայոց լեզվի քերականությունը և խոսքի մշակույթի հարցերը:

Էլ. հասցե - gayanehakobyan2019@mail.ru

Summary

DIFFICULTIES IN TEACHING LEXICAL EASTERN ARMENIAN.

Forms of pronouns

Yuri Avetisyan

Doctor of Sciences in Philology

Gayane Hakobyan

Key words – Personal pronouns, Possessive pronouns, Reflexive pronouns, Relative pronouns, Demonstrative pronouns, Indefinite pronouns, Quantifiers, and Distributives.

The problem of intralinguistic relations of words and types of semantic relations of pronouns has always been discussed in Armenian linguistics. There are structural disagreements. The accepted view is the multifaceted classification of pronouns

(personal, demonstrative ...), which, however, we strongly believe does not have sufficient scientific validation. The intra-group classification of pronouns should be done according to the contextual meaning, in relation to other parts of speech. In this combination-comparison, the grammatical description of noun-pronouns is more emphasized and visible, therefore, it is mastered well.

Резюме

ПРОБЛЕМЫ ОБУЧЕНИЯ МЕСТОИМЕНИЯМ В ВОСТОЧНОАРМЯНСКОМ ЯЗЫКЕ:

Местоимения - существительные

Юрий С. Аветисян
Доктор филолог. наук

Гаяне Л. Акопян

Ключевые слова: внутриместоименная классификация, именные части речи, соотносящиеся части речи, местоимение-существительное, категория лица и предмета, число, принимать артикль, образование множественного числа, местоименное склонение, именное, несклоняемый, синтаксический, нестандартность.

В армянкой лингвистике неоднократно обсуждался вопрос внутриместоименной классификации. Есть разногласия. Общепринятая точка зрения, о так называемой многоосновной классификации разрядов местоимений (личные, указательные, взаимные, отрицательные и т.д.), по нашему глубокому убеждению, не имеет достоверного научного обоснования. Внутриместоименная классификация должна производиться по выраженному ими общему смыслу и их соотношению с другими частями речи. В таком сопоставлении-сравнении грамматическое описание местоимений становится более подчеркнутым, явным и, следовательно, лучше усваивается.

REFERENCES

1. **Abrahamyan A.**, Ardi hayereni deranunnerĕ, Er., HSSH GA hrat., 1956 (in Armenian).
2. **Abrahamyan S.**, Zhamanakakits' hayots' lezu, Er., HSSH GA hrat., 1956 (in Armenian).
3. **Aghayan Ė.**, Ardi hayereni bats' atrakan baĝaran, Er., "Hayastan" hrat., 1976 (in Armenian).
4. **Asatryan M.**, Zhamanakakits' hayots' lezu: dzevabanut'yun, Er., EPH hrat., 1983 (in Armenian).
5. **Harut'yunyan H.**, Atsakan anun. Deranun, Er., EPH hrat., 1976 (in Armenian).
6. **Khlgat'yan F.**, Zhamanakakits' hayots' lezu, mas B, Er., "Zangak" hrat., 2010 (in Armenian).